թալն, հրամանաւ ամենավսեմ վիկարին և նորին կառի. իսկ մանուկն որ եբեր ընդ իւր, եմուտ ի դպրատուն սուրբ Փողովոյն. և զգեցաւ մարտի 25. իսկ կարապետ մանչն յուսանի մօտ սիրելոյն մեր պարոն յովանէսին. զսուրբ աջդ համբուրեն. և ես կատարեցաւ քննութիւնն ամենից եկեղեցականաց պաշտօնից և կարգաւորութեանց, զոր հրամայեալ էր Սրբութիւնն և տուեալ գրիւ բացարձակ իշխանութիւն ի վերայ յուղղափառաց ոչ միայն ի յարևելս այլ և ի Հռոմ. բազում ջանիւ կատարեցաւ աստուծով. յոյժ սիրով ողջուն և օրհնութիւն վերապատուելի յովանէս վերդապետին, ծանոյ նմա, յորժամ առողջանայ երէմիեա վարդապետն շուտով գալոց է որպէս և խնդրեաց. և ամենից հասարակութեան գերյարգելոյդ Ողջուն և օրհնութիւն. և եթէ գիտես երբ չուելոյ են գերապայծառքն մինաս եպիսկոպոսն և մօնսինեօռն որ է պոնայ, եթէ կամիս գրես ինձ. դարձեալ մեր սիրելի պարոն խաչին ողջուն և օրհնութիւն. շնորհ առնէ եթէ գիտէ ծանուցանէ, վասն չորհացակերի որդի[...] պետրոսին կողմանէ ուր լինիլն և որպէս կեալն. վերջ տամ բանիս. [խնդրելով] յԱստուծոյ զամենայն երջանկութիւն յար գերյարգելւոյդ. [և միշտ] ժտեմ զաղօթս ի Հասարակութենէ և Մնամ ամենայնի պատրաստ

Ծառայ
Աբրահամ Պետրոս Արծիւեան
Ա. Պատրիարգ Հայոց հաստատեցեալ
ի գահէն Պետրոսեան

ՃԺԹ.

Մեր կարծիքով՝ այլևս ստուգուած պէտք է համարիլ Վանքիս Աւանդատան Ս. Յովսեփայ պատկերին հեղինակը։ Հետագայ գիրը համոզիչ վաւերաթուղթ մը կը նկատենք այդ մասին։

Գերյարգելի և գերապատուելի տեառնդ իմոյ յոյժ սիրով և խոնարհաբար ողջոյն

Յայտ առնեմ վերոյ գրեցեալ գերյարգելի Հօրդ իմոյ որ ահա սրբոյն Պէնէտիքտոսի և սրբոյն Ովսէփայ պատկերքն ըստ տկարութեան իմոյ արարեալ թէսլիմ առի հանդերձ ղուլթույոմն ի ձեռն աղայչայ Պետրոսին որ բերէ հասուցանէ հրամանուցդ. խնդրեմ երբ հասանին, ոմն արվեստաւոր կոչես որ առանց սրսէլէմիշ անելոյ չէրչիվէի քաշէ. ետոյ հուկիթի չէրմկուց տայ Հայր իկնայտիոսն։

Այտ սուրբ ովսէփի պատկերն Վ. րդանէս եպիսկոպոսին յիշատակն է, երբ նկարէի ինքն ետես և կամեցաւ որ իւր անուամբ ուղարկեմ այտ պատկերն. ես 3 ոսկի տվաւ վասն փէրվազի. այս 3 ոսկին պարոն պետրոսին տվի որ բերէ հրամանուցդ տայ։

Նաւ մին խաչելութեան փոքր պատկեր կայ. վաղուց ժամանակէ մնացեր էր, որ է վերապատուելի հայր անտօնին։...

Խոնարհագոյն ծառայ և որդի
[պատկերահան] Յոհաննէս

Ամի տեառն 1743
Աբրիլի 22 [Կ. Պոլիս]

ՃԻ.

Աճարկու և անգութ ինքնակալ Դահմազ Ղուլի խանի կամ Նատրշահի եղեռնալից կեանքէն (1736–1747) զարմանալի և հետաքրքրական դիպուած մը կը լսենք Հ. Փօղոս Վ.-է։